

վար կը կործանին « դթութիւն » կ'ան-
շելով . և մարդ կը զարմանայ թէ ինչ-
պէս այնչափ մեռնող բազմութեան մէջ
ինքը գեռ ևս կ'ապրի :

Փողոցը իջնելով քիչ մը առաջ կ'եր-
թամ . այլ յանկարծ գնտակ մը երկա-
թեայ վանդակի մը ձողին զարնուելով
կը տափկի ու գետինը կ'իյնայ , և ջախ-
ջախած ապակիի մը կտորներուն գե-
տինը սփռուելուն ձայնը կը լամ : իսկոյն
ես ինձի կ'ըսեմ , հապա նորէն տուն
դառնանք :

Իլ շարունակուի :

ՊԱՐԵՍԻՆ

(Տես երես 13:)

b. — Երուսաղէմ :

Ահա Պաղեստինու յիշատակաց մայ-
րաքաղաքն , Դաւթի ու Սողոմոնի բնա-
կութիւնն , հեռաւոր կողմեր ցրուած
համբաւաւոր ազգի մը ամենամեծ մաս-
ցորդը : Երուսաղէմ առարկայ երկնից
ամենայն օրհնութեանցը և խստագոյն
պատուհասիցը . զլիսէն անցած մեծա-
մեծ պատահարաց պատճառաւ , աշ-
խարհիս ամեն կողման ժողովրդոց մը-
տադրութիւնն յինքն ձգած է : Թէ-
պէտ հիմա ուրիշ բան չի ներկայացըներ
բայց եթէ աւերմանց և կործանմանց
ընդարձակ պատկեր մը , բայց պան-
դուխտն ու ճանապարհորդն ամեն քայ-
լին կանկ կ'առնու հին յիշատակարան
մը գիտելու : Երուսաղէմայ պատմու-
թիւնը մինչև Աբրահամու ժամանակն
՚ի վեր կ'ելնէ , որ է երեքհաղար տա-
րուան միջոց : Իր հիմնարկութենէն սկը-
սեալ միշտ արդարութեան և խաղա-
ղութեան անուններն կրած է , և կոր-
ծանմանց ու աղէտից մէջ ալ մինչև
հիմա գեռ Սուրբ կը կոչուի :

Երուսաղէմ մօտեցողն կը կարծէ թէ

ամեն կողմանէ ամուլ և ապառաժ լեռ-
ներէ շրջապատեալ մեռելոց թագաւո-
րութիւն մը կը մտնայ . բայց իր մտա-
դրութիւնն ուրիշ մասամբ մը կը զարթ-
նու և անցելոյն յիշատակը մոռցունել
կու տայ զներկայն . վասն զի առանց
կարծելուն իր ամեն քայլերն նահա-
պետաց ու մարգարէից հետքերը կը
կոխեն : Բայց չորս կողման խեղճու-
թեանց և աւերմանց տեսարանը կը յի-
շեցընեն միանգամայն թէ անիծեալ եր-
կրի մը վրայ է . ուր ամենամեծ եղեռն
մի գործեցաւ . զոր հաղար ութիշարիւր
տարիէ ՚ի վեր պատժելէն ետքն ալ ,
գեռ երկնային ցասումը չէ իջեր . և թէ
այս երկիրը , զոր խոստացաւ և տուաւ
Աստուած իր ժողովրդեան , երկիր եր-
բեմն բերրի և հարուստ , և հիմա անա-
պատ մը դարձեր է :

Բազմաթիւ է երուսաղեմայ բնա-
կին . բայց կարծես թէ մարգկանց բազ-
մութեան հետ , նաև բոլոր մարգկային
խեղճութիւնք հոն ժողոված ըլլան : Հե-
ռուէն նայողն որ մերկ ժայռից մէջ չո-
րացեալ դաշտագետնի մը վրայ կը գես-
նայ զինքն , շրջակայ տիսուր և խուլ
անապատից վրայ տիրող անկենդան
ճիւազ մը կը կարծէ : Անտանելի տը-
խրութիւն մը կը պատէ ուղեորին սիր-
ուր , և կարծես թէ այն թշուառ քաղա-
քին վրայ յայտնապէս ծանրացած կը
տեսնայ աստուածային բարկութեան
ձեռքը , ստիպելով իմն զինքը յաւիտե-
նական անձկութեան մէջ մնալու :

Երուսաղէմ թէպէտ տիսուր և լքեալ ,
բայց իր մարգարէից երգոց պէս իր տը-
խրութիւնն ալ խորհրդական և քերթո-
ղական է : Սիոնի սգաւոր միայնութիւ-
նը միշտ յանկուցիչ և սիրելի է . վասն
զի կը յիշեցունէ մեզ մեր խանձա-
րուքն , մեր հասուն հասակն և մեր
գերեզմանը : Կարելի չէ քայլ մ'առնուլ
այն նուիրական երկրին վրայ առանց
սրտի բախման . իր աւերակաց մէջ ու-
րիշ բան չի տեսնուիր , բայց եթէ ժո-
ղովրդոց յանցանաց և աղէտից ընդար-
ձակ նկար մը , աստուածային ողորմու-
թեան և զթութեան նկարին հետ խառ-

նուած . որ բաւական է ուղևորին տը-
խրութիւնը փարատելու :

Երուսաղէմ զօրաւոր և գեղեցիկ էր
երբեմն , որոյ ապացոյց են Սողոմոնի
մեծագործութիւնքը . Հրէաստանի վը-
րայ ունեցած ազդեցութիւնը , և հեռա-
ւոր ժողովրդոց հետ ստացած վերաբե-
րութիւնքը : Հիմա ուրիշ բան չէ բայց
եթէ յանապատի բարձրացած գերեզ-
ման մը : Ասիկա ըստ աւանդութեան
հին Սաղիմն է , զոր շինեց Մելքիսեդէկ
քահանայապետ յամի արարչութեան
աշխարհի 2023 : Իր շինութենէն յիսուն
տարի ետքը Եբուսացիք տիրեցին անոր .
սերունդը Եբուսայ որդւոյ Քանանու :
Ետքը տիրեց Յեսու Երրայեցւոց Քանա-
նու Երկիրը մտնելուն առջի տարին .
բայց բերդն Եբուսացւոց ձեռքն մնաց
մինչև ցԴաւիթ , որ տիրելով անոր ըն-
դարձակեց զայն և հոն պալատ մը շի-
նեց : Սողոմոն մեծցուց և գեղեցկացուց
քաղաքը . և իրեն առաջնորդութեամբն
բարձրացաւ առաջին Տաճարը , որոյ
զարմանալիքն պատմեն մեզ Ս . Գիրք և
Յովսեպոս Երրայեցի : Սողոմոնի մա-
հուընէն հինգ տարի վերջը , Սեսոստր
Եգիպտացւոց թագաւորն կողոպտեց
զԵրուսաղէմ , և յամի արարչութեան
աշխարհի 3513 Նաբուգոզոնոսոր 'ի հի-
մանց կործանեց զայն , այրեց տաճարը
և գերեց զԵրրայեցիս 'ի Բաբիլոն : Յետ
Եօթանասուն տարւոյ գԵրութեան Զօ-
րաբարէլ սկսաւ նորէն շինել քաղաքը
ու տաճարը , որ քանի մը տարի ընդ-
հատելով , ամբողջացուցին Եզրաս և
Նեեմի : Յամին 3583 Ալեքսանդր Երու-
սաղէմ գալով զոհ մատոյց տաճարին
մէջ : Յետոյ տիրեց Երուսաղէմի Փիլա-
դելֆոս Պտղոմէոս Եգիպտացւոց թա-
գաւորն , և խնայութեամբ վարուելով
հետը մեծամեծ պարգևներ զրկեց տա-
ճարին : Անտիոքոս Մեծն առաւ զայն
Եգիպտացւոց ձեռքէն և Պտղոմէոս Եւ-
երգէտէսին տուաւ : Ետքը Անտիոքոս
Եպիփան կողոպտեց զԵրուսաղէմ , և
Ոլիմպեան Արամազդայ արձանը կանգ-
նեց տաճարին մէջ : Մակարայեցիք Ետ-
քը նորէն ձեռք ձգեցին իրենց հայրե-

նեաց ազատութիւնը , զոր և պաշտպա-
նեցին արեամբ չափ Ասիոյ թագաւորաց
դէմ : Բայց դժբախտաբար Արիստա-
բուլեայ և Հիւրկանոսի մէջ վէճ ծագե-
լով , Հռովմէ կը դիմեն , որ Միհրդատայ
մահուամբն համարձակութիւն ստանա-
լով Ասիոյ մէջ , մէկէն Պոմպէոսը կը
դրկէ , որ կու գայ և կը տիրէ Երուսաղէ-
մի , և զՀիւրկանոս Քահանայապետու-
թեան պաշտօնին մէջ կը հաստատէ : —
Բայց Անտիգոնոս Արիստաբուլեայ որ-
դին , կուսակցութիւն մը կազմելով ,
պատերազմ կը բանայ իր հօրեղբօրը
դէմ , և Պարթեաց օգնութեամբ Հրէ-
աստան կը մտնայ , Երուսաղէմի կը տի-
րէ , և գերի կը բռնէ զՀիւրկանոս : Բայց
Հերովդէս , Հիւրկանոսի զօրավարնե-
րէն մին , Հռովմայեցւոց ձեռնտուու-
թեամբ կը տիրէ Հրէաստանի , և կը
զարդարէ զԵրուսաղէմ մեծագործ և
գեղեցիկ շէնքերով : Իրեն թագաւորու-
թեան ժամանակ աշխարհիս սկիզբէն
'ի վեր խոստացեալ Փրկին կը ծնանի
Հրէաստանի բեմլեհէմ գեղին մէջ : —
Հերովդէս մեռնելով , կը յաջորդէ իր որ-
դին Արքելայոս , և իրեն ալ Ազրիալպաս ,
որուն մահուընէն ետքը Հրէաստան
հռովմէական կայսերութեան գաւառ-
ներէն մէկը կ'ըլլայ : Բայց Հրեայք Հռով-
մայեցւոց դէմ գլուխ վերցնելով , պա-
տերազմի կ'ելլան . Տիտոս կու գայ կը
պաշարէ զԵրուսաղէմ և կը կործանէ
զայն յամին 71 Յ . թ . Այս ահաւոր պա-
տերազմին մէջ մէկ միլիոն 338,460
Հրեայք կը մեռնին 'ի բաց առնելով
զծերս , զկանայս և զմանկունս . և
99,200 հոգի գերի կը տարուին , տե-
սարան ըլլալու Եւրոպիոյ և Ասիոյ ամ-
փիթէատրոնից : Արդարոյն արիւնը 30
դահեկանի վաճառեցաւ յԵրուսաղէմ ,
և ժողովուրդն աղաղակեց « Արիւն գո-
րա 'ի վերայ մեր և 'ի վերայ որդւոց մե-
րոց » : Աստուած լսեց այս ձայնը և յե-
տին անգամ մ'ալ կատարելով իր ժո-
ղովրդեան ահաւոր խնդրուածքը , դար-
ձուց բոլորովին իր աշքն խոստացեալ
Երկրին վրայէն :

Ազրիանու կայսերութեն ժամանակ ,

Հրեայք երկրորդ անգամ մ'ալ ապրատամբելով, Երուսաղեմի մէջ մնացած մէկ քանի յիշատակաց բաներն կործանեցան. և Աղրիանոս այս տւերակաց վրայ քաղաք մը շինեց և անունը դրաւ Ելիա կապիտոլեան, և արգիլեց որ Հրեայք ներս չի մտնան. և տաճարին տեղն ալ Արամազդայ մեհեան մը կանգնեց: Այս երկրորդ ապստամբութեամբ 535,000 Հրեայք մեռան և շատ քաղաքներ հարթ յատակ եղան: Դիոկլետիանոսի միջոց Երուսաղեմի անունն այն աստիճանի մոռցուեցաւ, որ բդեաշխ մը մարտիրոսէ մը լսելով թէ Երուսաղէմ ծնած է, կարծեց թէ քրիստոնէիցմէ դաղուկ շինուած քաղքի մը անուն կու տայ:

Մինչև ցկոստանդիանոս Մեծն և իր մայրը՝ Երուսաղէմն Յիսուսի անօրինական տեղուանքն հեթանոսական պիղծ պաշտամանց տեղի մ'եղած էին. բայց իրենք կործանեցին չաստուածոց արձաններն, որ կանգնուած էին Յիսուսի գերեզմանին վրայ, և հոյակապ շէնքերով զարդարեցին զԵրուսաղէմ: Յամին 643 Խոսրով Պարսից թագաւորն տիրեց Հրէտատանի. բայց 627ին նորէն Հերակլիոսի ձեռքն անցաւ: ինն տարի ետքը Օմար Խալիֆայն առաւ, որուն հնազանդեցաւ ոչ միայն Հրէտատան այլ և Եգիպտոս. և 200 տարուան միջոց անդադար պատերազմաց և աւերմանց նշաւակ եղաւ Պաղեստին: 868էն մինչև ց1099, այլ և այլ Եղիպտացի ու Արաբացի իշխաններ տիրեցին անոր: Յամին 1099 կոփրետոս տէ Պույլիոն իր խաչակիր բանակովն երեւեցաւ Պաղեստինու սահմաններն. և նոյն տարւոյն յունիաթ 15ին ուրբաթ օր մը ժամը 3ին յետ միջօրէի, խաչազրօշը սկըսաւ ծածանիլնուիրական Քաղքին պարսպաց վրայ: Երուսաղէմ մինչև ց1188 քրիստոնէից ձեռքն մնաց, և այս թուականին տիրեց անոր Սալահատին: ՈՒ. քարտոս առիւծասիրտն շատ ուշ օդնութեան գնաց, ոչ ինքն և ոչ ուրիշ խաչակիրք որ յաջորդաբար մոտան Պաղեստին, կըցան աղատել անհաւատից

ձեռքէն նուիրական Քաղաքը: Յամին 1517 տիրեց Հրէտատանի Սէլիմ՝ սուլտան Յսմաննեանց. և այս թուականէն սկսեալ մինչև ցայսօր Հրէտատան միշտ հպատակ մնաց Բ. Դրան:

Երուսաղեմի առանձին պատմութիւն թէպէտ շատ ընդարձակ է, բայց այս համառօտութիւնն իսկ բաւական է ցուցընելու, թէ որչափ և որպիսի յիշատակներ մեր առջին կըբանան այս հին քաղքին մնացորդքն, որոց վրայ պիտի խօսմիք: Եթէ 'ի բաց ալ հանեմք կրօնական յիշատակներն, դարձեալ թերեւս չկայ աշխարհիս վրայ ուրիշ քաղաք մը, որուն զլսէն այնչափ զանազան և յիշատակաց արժանի գէպքեր անցած ըլլան:

Այժմեան Երուսաղէմը հնոյն նկատմամբ տեղւոյ փոփոխութիւն կրած է. սակայն զիւրին է ճանչնալ ընդհանրապէս հնոյն գրաւած տեղը. թէպէտ և ոչ այն աստիճանի մինչև դարական աւերակաց մէջէն 'ի գուրս հանել Տաճարը, պալատներն, աւազաններն, ջրանցներն, ճամբաններն և հասարակաց հըրապարակներն. վասն զի դժբախտաբար այս քաղքին հին զրից վրայ, ճիշտ, որոշ, և գոհացուցիչ տեղեկութիւն մը չունիմք: Յոյն և Լատին մատենագիրք ամենաքիչ տեղեկութիւն կու տան. իսկ սրբազն գրիչք գրեթէ ամենեին բան մը չեն աւանդեր. ինչու որ աւելորդ համարած են իրենց ազգայնոց ծանօթ տեղուանքն ստորագրել: Եւ եթէ Յովսեպոս իր գրուածոց մէջ քանի մը կըտոր կարեւոր բան աւանդեց մեզ, բայց պէտք է գիտնալ, որ ինքը նոր թուականին առջի գարուն վերջերն ծաղկեցաւ, որ միայն նոյն ժամանակի Երուսաղեմին ականատես եղած է. ուստի Աղոմննի Երուսաղէմը նկարագրելու համար, պէտք էր որ աւանդութեանց և երրայական տարեգրութեանց գիմէր: Եւ յայսմասին ալ շատ տեղ կը հակառակի հին կտակարանին, և ստէպ ինքն իրեն, որով տարակուական կը մնան պատմած բաներն. ուստի դժուա-

բին կ'ըլլայ ճիշտ գաղափար մ'ունենալ
Երուսաղեմի առջի դրից վրայ:

Հին Երուսաղեմին վրայ ունեցած
տեղեկութիւննիս այս է, որ երեք բըլ-
րոց վրայ շինուած էր. որոց մին հա-
րաւային արևմտեան կողմն կ'իյնար, որ
աւելի ընդարձակ և բարձր էր, և կ'ը-
սուէր լեառն Սիոն, որոյ վրայ Երու-
սացիք բերդ մը շինած էին: Հանդէպ ա-
սոր, հիւսիսային արևելեան դին նուազ
բարձր աղեղնածն ուրիշ լեռ մ'ալ
կար, որ Ս. Գրոց մէջ մասնաւոր ա-
նուն մը չունի, որ աւելի ետքը Աքրա-
բսուեցաւ. և այս լերան կողմէն Դաւ-
թի թագաւորութենէն վերջը քաղաքը
շատ տարածուեցաւ: Ասոր հարաւային
արևելեան կողմը երրորդ լեռ մ'ալ կար
որ կ'ըսուէր Մորիա, որոյ վերայ շինուե-
ցաւ Ցածարը: Սիոն և Մորիա լերանց
մէջ հովիտ մը կար, որ զիրենք իրար-
մէ կը բաժնէր. կար ուրիշ ընդարձակ
հովիտ մ'ալ ընդ մէջ Աքրա և Մորիա
լերանց: Սիմոն Մակարէ Աքրա պզտի
քաղաքը կործանեց. լեցնել տուաւ հո-
վիտը, և հաւասարեց Մորիա և Աքրա
լերանց գագաթունքը, անանկ որ եր-
կուքէն մէկ լեռ մը ձեւացաւ: Մորիա 'ի
սկզբան անկանոն և պզտի լեռ մ'ըլլա-
լով, չէր կրնար տանել տաճարին հետ
վերաբերութիւն ունեցող բոլոր չէն-
քերն. ուստի Սողոմոն վարի հովիտն
արևելեան կողմը զօրաւոր պարիսպ մը
շինել տուաւ 400 խորանարդ բարձրու-
թեամբ. և անոր ներսէն հողը բարձրա-
ցընելով ընդարձակեց լերան տաճածու-
թիւնը: — Ամենեին ստոյգ տեղեկու-
թիւն մը չունիմը թէ Երուսաղէմ ինչ
աստիճանի ամրութիւն ունէր, քաղ-
դէացւոց զայն բոլորովին կործանելէն
առաջ: Միայն Ս. Գրոց և առաւելապէս
Նեմայ զրբին մէջ շատ տեղ Երուսա-
ղեմայ այլ և այլ դրանց յիշատակու-
թիւններ կ'ըլլան. ինչպէս դուռն Հեղե-
ղատի, դուռն Աղքեր, դուռն Աշազա-
նաց, դուռն Հին, դուռն Զորոյն, դուռն
Մոխրոցի, դուռն Անկեան, դուռն
Զրոյն, և այլն: Գլխաւոր շէնքերն էին
Ցածարը, զոր շինեց Սողոմոն. Սիոնի

բերդը կամ Դաւթի քաղաքը. Սողո-
մոնի պալատը: Ո. Գիրքը Երուսաղեմի
ճամբաններուն մէկուն անունը միայն
մեզի հասուցած է. և Թալմուտը նաև
քանի մը վաճառանոցներ կը յիշատա-
կէ: Ո.հա այսչափ է հին Երուսաղեմի
վրայ ունեցած տեղեկութիւննիս. պա-
րիսպք և բերդը, տաճարն, պալատը և
տունք ամենայն ինչ կործանեցան և
Նաբուգոզոնոսորայ զօրաց աւար եղան,
և ոչ բան մը մեզի հասաւ:

Բարելոնի գերութենէն եպքը նորէն
շինուելով, տեսաւ Երուսաղէմ իր տա-
ճարին վերականգնումը. և անոր հետ
տանց, պարսպաց և բերդից շինութիւր:
Ժամանակակից պատմագիրք շատ շէն-
քեր կը յիշատակեն զարմանալով իմն
անոնց գեղեցիկ ճարտարապետութեան
վրայ: Ասոնց մէջ առաջինն է երկրորդ
անդամ շինուած տաճարը, Հերովդեայ
թագաւորական պալատը, որ բոլոր սպի-
տակ մարմարինէ շինուած էր, որ իր
գեղեցիկ պարտէզներովն, աւազաննե-
րովն և ջրմուղներովն կը զրաւէր Սիոն
լերան բոլոր արևելեան կողմը: Յովե-
պոսի նկարագրած մէջէ մէջ երեք կարդ
164 աշտարակներով պարիսպը կը ցու-
ցընէ թէ ինչպիսի մեծութեան հասեր
էր Երուսաղէմ: Բայց շատ քիչ տեսեց
այս փառաց ժամանակը. Հոռվմայեցիք
կրկին անդամ աւելի ահաւոր կերպով
կործանեցին զայն, և « Ոչ մնաց քար
'ի քարի վերայ »:

Իր շարտնակուի:

ՀՐՈՎՄԱՅ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ ՈՒ ՊԱՏԵՐԱՋՄՆԵՐԸ

(Տես Հատ. իթ. Երես 364.)

Գ.

Թէ ինչպէս կրցան մեծնալ Հոռվմայեցիք:

Այս ժամանակներո՛ դրեթէ ամեն
Եւրոպիոյ ժողովուրդները նոյն արուեստ-
ները, համոնիան դէնքեր, մի և նոյն